

ՀԵՐԱՎԻՒԱՐ

(Թուստաւ Փլօղերի)

I.

Մեռեալ ծովից արևելք, սրածայր ապառաժի գազաթին, որ կոնուսի ձև ունէր, կախուած էր Մարխերուս ամրոցը, Կողբից, առաջնից և յետերից նրան շրջապատում էին չորս խոր հովիտներ նրա ստորոտում իստ առ խիտ ընկած էին տները, շրջապատուած պարսպով, որ բարձրանում և իջնում էր համապատասխան գետնի մակերեսոյթի։ Մանուածապտոյտ, ժառի մէջ փորած ճանապարհն ամրոցը միացնում էր քաղաքի հետ, նորա ատամնաւոր հարիւր քսան կանգուն բարձրութեամբ պարիսպները բազմաթիւ անկիւնաներով, պասկուած էին աշտարակներով, որոնք նմանում էին մարդարիտների անդունդի եղերքին կանգնած այս քարեայ թագի վերայ։

Ամրոցի ներսը գտնուում էր պալատը, զարդարուած կամարակապ սրահներով, տափակ տնիքներով, շրջապատուած վայրի ձիթենիների ցանկապտով և ծողերով, որոնց վերայ ձգուած էր կտաւ, արեից պաշտպանելու համար։

Մի անգամ, լուսաբացին Տետրարխ Հերովդէս-Անտիպան բարձրացաւ այնտեղ և արմունկի վերայ յենած սկսեց նայել,

Ուղղակի ներքենում սկսում էին դուրս ցցուել լեռների կատարները, զետ մինչև կիրճի խորքը շրջապատուած մառախուզով Մէզը բարձրանում էր և նօսրանում և ահա երևում են Մեռեալ ծովի եղերազգերը։ Մարխերուսի յետերից բացւում է արշալոյսը կարմիր ցոլքով։ Շուտով նա լուսաւորեց աւագուտ ափը, բլուրները, անապատը և Հրէսատանի հեռաւոր լեռների գորշ, խորդուրուտ լանջերը։ Հորիզոնի մէջտեղով սև շերտի նման ձգուում էր ենգաղդան, խորքում՝ Քէրքոնը բարձրանում էր ինչպէս գմբէթ։ ահա երևում է էսքօլը ծածկուած նունենիների պուրակով, Սօրէքը իւր խաղողի այգիներով, Կարմէլը կարմէլոս կունգուտով պատաժ։ Անտոնիոսի խորանարդի նման հսկայական մեծութեամբ աշտարակը թագաւորում է երուսաղէմի վրայ։ Տետրարխը սկսեց իւր հայեցքը դէպի աջև սկսեց դիտել երիքովի արմաւենիները։ նա մտածում

էր իւր Գալիլիայի ուրիշ քաղաքների մասին հափառնայումի, ինդօրի, Նաղարէթի և Տիբերիալայի, ուր նա երկի այլիս չի վերադառնալ Յորդանանը հոսում էր ցած մերկ անապատի միջով, փայլիլուն ինչպէս ձիւնէ շղարշ, խտղեցուցիչ սպիտակի լիճը նմանում էր երկնազայն քարի, նրա հարաւային ծայրում, որտեղ ընկած էր Եմէնը, Անտիպան տեսաւ այն, ինչ որ վախենում էր տեսնել Այնտեղ ձգուած էին մութ վրաններ, մարդիկ նիդակները ձեռքներին քնած էին ձիաների մէջ, հանգչող խարոյիները փայլում էին երկրի վրայ ինչպէս կայծեր:

Դա արարական չէիսի զօրքն էր: Անտիպան բաժանուել էր նրա աղջկանից, որպէսզի ամուսնանայ Հերովդիալայի, իւր եղբայրներից մէկի կողջ հետ, որն ապրում էր հտալիայում հրաժարուած իշխանութեան որևէ ձգուածից:

Անտիպան օդնութեան էր սպասում հոռվմայեցիներից բայց Ասորեստանի կառավարիչ Բիթելիոսը, դանդաղում էր և Տետրարիը տանջւում էր անհանգստութիւնից:

Ծնորհիւ Ագրիփայի նա անշուշտ կորցրել էր կայսեր բարեհ հածութիւնը: Նորա երրորդ եղբայր Փիլիպպոսը, Բաթանէայի իշխանաւորը գտանի զինուում էր, Հերովդէսի հեթանոսական սովորութիւնները նրա ոէմ էին հանել հրէաներին: բոլոր մասցածները տանջւում էին նորա իշխանութեան տակ և նա չփառէր ինչ որոշումն անել: մեղմացնել արաբներին, թէ դաշն կապէր պարթեների հետ, և իւր ծննդեան տօնի պատրուակով իւր զօրքի առաջնորդներին, գիւղերի կառավարիչներին և Գալիլիայի իշխանաւորներին մեծ խճոյքի էր հրաւիրել:

Տետրարիը սուր անհանգիստ հայեացք նետեց բոլոր ձանապարհների վրայ, Նրանք ամայի էին: Արծիւները սաւառնում էին նորա գլխավերեւում: զինուորները ննջում էին թիկնած ամրոցի պարսպին, մեռելային լուսութիւնը թագաւորում էր ամրոցում:

Յանկարծ Անտիպան գունատուեց, նորան հասաւ մի ձայն, որ կարծես դուրս էր զալիս գետնի տակից: Նա կացաւ, լսում էր ձայնը լսեց, ապա նորից հնչեց, և ծափ զարկելով Հերովդէսը ձայն տուեց: —Մաննայի, Մաննայի:

Երևաց մի մարդ, մինչև գոտին մերկ, ինչպէս բաղնիսպան: Սա նիհար ծերուել էր, շատ բարձրահասակ, կողքից քաշ էր ընկած ահագին կեռ թուրը, բրոնզիայ պատեանի մէջ: մազերը ցըցուած էին կատարի պէս և այդ պատճառով ճակատը բնականից աւելի երկար էր թուրմ: ինչոր քնէածութիւն մթնացըրել էին նորա աջերը, բայց ատամները փայլում էին և արագ գնում էր քարերի վրայով: նա ճկուն էր կապէի պէս, իսկ դէմքը անդորր էր նման մումիայի:

— Ուր է նա, հարցրեց Տեսրարիսը:
— Այստեղ, ուր էր միշտ, պատասխանեց Մաննային, մաս-
տով դէպի յետ ցոյց տալով:

— Ես լսեցի նրա ձայնը:

Եւ հառաջելով լի կրծքով Անտիպան սկսեց հարց ու փորձ
անել Հովաքանաննի մասին, որին լատինացիները անուանում են
սուրբ Յովհաննէս Մկրտիչ Կրկին տեսար այն երկու մարդկանց,
որոնց անցեալ ամիս թոյլ տրաւեց բանտ մտնել նորա մօտ և յա-
ջողեց քեզ իմանալ թէ նորա ինչու համար էին եկել:

Մաննային պատասխանեց:

— Նորա նրա հետ խօսում էին գաղտնի բառերով, ինչպէս
զողերը խաչակապ փողոցների վերայ և ապա ուղերուեցին վերին
Գալիլիա, ասելով, որ կիվրադառնան մեծ համբաւով:

Անտիպան գլուխը քաշ ցցից սարսափը նկարուած էր նրա
գէմքի վերայ:

— Հսկիր նրա վերայ, հսկիր նրա մօտ ոչ ոքի մի թողնիք
Միշտ գուռը փակ պահիր: Ծածկիր փոսը: Թող նոյն իսկ չկաս-
կածեն թէ նա կենդանի է:

Մաննային կատարել էր այս հրամանները, նախ քան ստա-
նալը. որովհետեւ Յովաքանաննը հրէայ էր, իսկ նա տառում էր հրէա-
ներին, ինչպէս բոլոր սամարացիք:

Քարիզմում գտնուած նոցա տաճարը, որը Մովսէսի կտա-
կով պէտքէ իսրայէլի ժողովրդի կենդրոնատեղին լինէր, գոյու-
թիւն չունէր Գիրկան թագուորի ժամանակից. Երուսաղէմի
տաճարը նոցա կատաղեցնում էր. դա ծաղր էր նոցա համար,
դա մշտական անարդարութիւն էր. Մաննային մի անգամ
մտաւ այնտեղ, որ զոհարանը պղծի մեռածների ոսկորիներով, և
ազատուեց միայն փախուստով. իսկ նրա ընկերներին գլխատե-
ցին:

Նա տեսնում էր տաճարը երկու ըլլուրների մէջ. Պատերը
սպիտակ մարմարից և ոսկուց կառուցուած տանիքը փայլում էին
արևի առաջ: Դա մի փայլուն սար էր, ինչ որ գերբնական, իւր
հպարտ փառանելութեամբ ճնշում էր իւր շուրջն ամեն ինչ:

Մաննային ձգեց ձեռքերը դէպի Սիօնը և ամրող մարմնով
ձգուելով սեղմած բռուցքներով և յետ տարած գլխով, նրան
նզովք ուղարկեց, հաւատալով խօսքի ոյժին:

Անտիպան անվրդով լսում էր նրան:

Սամարացին նորից խօսեց:

— Երբեմն նա այս ու այն կողմն է ընկնում, պատրաստ
փախէլու և ազատութեան յոյս ունի: Երբեմն հիւնդ դադանի
տեսք է ստանում. բայց ամենից յաճախ ես տեսնում եմ, ինչ-

պէս նա խարիսափելով ման է գալիս կրկնելով. «Ի՞նչ կայ այս-
տեղ. ես պէտք է մեղմանամ, որպէսզի նա աճի»:

Անախպան և Մաննային իրար նայեցին: Բայց մտքի լար-
ուած աշխատանքն արդէն յոդնեցրել էր Տեսրարիխն:

Այս բոլոր լեռները, որ չորս կողմից սեղմում էին, նման
ահազին քարացած կոհակների, ծովափնիայ ժայռերի սև ճեղք-
ուածները, անհղր կապրոյս երկնքը, արևի շլացոցիչ փայլը, ան-
դունզների խորութիւնը խոռվում էին նրա հոգին, և ճնշող թա-
խիծը համակել էր նրան տեսնելով անապատն իր անդունդներով,
և լեռնաշղթաներով, որոնք նման էին պալատների և եկեղեցիների
աւերակների: Տաք քամին բերում էր ծծումբի հոտ, կարծես
Սուզոմի և Գոմորի գոլորշիները լինէին, որոնք թաղուած են Մե-
ռեալ ծովի ծանր ջրի տակ: Երկնքի զայրոյթի այս հետքերը սար-
սափեցնում էին Տեսրարիխն և նա կանգնած էր անթարթ հայ-
եցքով ընկած ցանկապատի վրա վլուխը սեղմած ձեռքերի մէջ:

Մէկը նրան դիպաւ: Նա յետ դարձաւ: Նրա առաջ կանդնած
էր Հերովդիադան:

Նրա թեթև ծիրանեայ սիմուրքն իջնում էր մինչև սանդալ-
ները: Շատապելուց նա չկարողացաւ հագնել ոչ մանեակ, ոչ գին-
դեր. սև մազերի հիւսը ուսերի վրայով կախուած, կորչում էր
ստինքների փոսիկում: Նորա լայնացած քթածակերը դողում էին,
դէմքը փայլում էր հանգիստուրութեամբ:

Կեսարի ողորմութիւնը մեզ հետ է: Ազրիապան բանտում
է, բացականչեց նա և նրա խօսքերը ցնցեցին Տեսրարիխն:

—Այդ քեզ ով ասաց:

—Այդ արդէն իմ գործն է:

Եւ նա աւելացրեց:

—Նո կամենում էր, որ Կայոսը կայսր դառնայ: Ապրելով
նորա ողորմութեամբ, Ազրիապան ձգտում էր արքայական տիտ-
ղոսի, որին ձգտում էին և իրանք: Բայց այժմ այլս երկիւղ
չկայ:

—Տիրերիոսի բանտերը հեշտութեամբ չեն բացւում և նոքա,
որոնք ընկնում են այնտեղ, պէտք է երբեմն մնաս բարե ասեն
կեանքին: Անտիպան հասկացաւ նրան և թէև Հերովդիադան Ազրիա-
պայի քոյրն էր, չէր դատապարտում այդ անգթութիւնը: Այդ
սպանութիւնները սովորական բաներ էին, ինչոր ճակատագրական
անհրաժեշտութիւն արքայական տներում: Հերովդէսի տանը դոցա
հաշիւը կորցրել էին:

Ապա նա պատմեց Անտիպային բոլորը. կաշառուել էին հո-
վանաւորեալները, բացւում էին նամակները. լրտեսներ էին կանգ-

նեցրած բոլոր դռների մօտ և վերջապէս իրեն յաջողեց զրաւել ամբաստանող Եւտիքէսին:

— Ինձ զա ոչինչ չարժեցաւ: Միթէ ես քեզ համար աւելին չարեցի: Ես ձգեցի իմ աղջկան, ասաց Հերովդիաղան: Ամուսնուց բաժանուելուց յետոյ նա իւր երեխային թողեց Հոռվիմում, յուսալով երեխաներ ունենալ Տետրարխից: Նա այդ մասին երբէք բան չէր ասել Անտիպային և սրան զարմացրեց նրա քնքշութեան յանկարծական փղձկոցը:

Փաեցին վարագոյրը և նրա կողքին զրեցին լայն բարձեր: Հերովդիաղան նստեց նրանց վերայ և երեսը թեքելով սկսեց լաւ Ապա նա ճեաքով սրբելով աչքերը ասաց, որ նա այլև չի կամեն նում այդ մասին մտածել, որ ինքը բաղդաւոր է և սկսեց յիշել իրենց խօսակցութիւնն այստեղ, ատրիումում, հանդիպումը բաշղանիքներում, զրօսանքը Via Sacra-յում և գիշերները. որ անցէին կացնում Հռովմէական գիւղում, ընդարձակ դղեակներում, ծաղկներից հիւսած կամարների տակ, երբ իրանց շուրջը քըչքչում էին շատրուանները: Նա նայում էր Անտիպային, ինչպէս այն ժամանակ, և գողունի շարժումներով փաղաքշում էր նրան: Անտիպան Հերովդիաղային յետ մղեց, այնքան հեռու էր նա այժմ սիրուց, որ Հերովդիաղան աշխատում էր կենդանացնել Այս սէրն էր նրա բոլոր դժբաղդութեան պատճառը. որովհետև ահա շուտով տասներկու տարի կլինի, որ պատերազմը չի գաղարում: Նա ծերացրեց Տետրարխին: Նրա ուսները կուաշել էին մանիշակագոյն երիդներով գորշ կրկնոցի տակ, ճերմակը արծաթազօծել էր մօրուքը, և արևի ճառագայթները թափանցելով վարագոյրի միջից լուսաւորումէին նրա մուայլ ճակատը: Հերովդիաղայի ճակատի վրայ նոյնպէս կային կնճիռներ և դէմ առ դէմ նստած նորա լի ատելութեամբ հայեացքներ էին փոխանակում:

Լեռների մէջ ճանապարհները սկսեցին կենդանանալ: Հովիւները քշում էին եզներ, երեխաները քաշում էին էշերին, ախոռապետները տանում էին ձիերին: Բարձրից իջնողները, որոնք Մարիերուսի ճանապարհով բարձրանում էին, անհետանում էին ամրոցի յետեւմ. ուրիշները անցնում էին կիրճով, որ ընկած էր գիմացը և համնելով քաղաքին, զարսում էին իրանց բեռները բակերում: Սոքա Տետրարխի մատակարարներն և նրա հիւրերի ժառաներն էին, որոնց տէրերն առաջուց էին ուղարկել: Յանկարծ դարաւանդի խորբում ձախ կողմում երեաց յեսսէնացին սպիտակ հագուստով, բոկոտն, ստոյիկի կերպարանքով: Աջ կողմ կանգնած Մաննային յարձակուեց նրա վերայ բարձրացրած սրով:

— Սպանիր նրան, աղաղակեց Հերովդիաղան:

կաց, ասաց Տետրարխութ:

Մաննացին կանգնեց, յեսէնացին՝ նոյնպէս

Ապա նոքա ընկրկելով հեռացան զանազան սանդուխքներով
իրարից աչք չհեռացնելով:

Ես ճանաչեցի նրան, ասաց Հերովդիաղան, նրան անւառ
նում են Փանուել. նա կամենում է տեսնուել Յովաքանաննի հետ,
որովհետև դու շլացած խնայեցիր նրան:

Անտիպան հակածառեց, որ Յովաքանաննը կարող է երբեիցէ
պէտք դար: Նրա յարձակումը Երուսաղէմի դէմ հարկադրում են
մնացած հրէաներին մօտենալ նրան:

Ոչ, պատասխանեց Հերովդիաղան, նոքա պատրաստ են
ծառայել ամենքին և ըստունակ չեն իրանց համար հայրենիք ըս-
տեղծելու: Իսկ նա, ով խռովում է ժողովրդեան, յոյս ծնեցնելով,
որը չի մնացի Նէմմի ժամանակից, պէտք է ոչնչանայ:

— Ի՞նչո՞ւ շտապել, ասաց Տետրարխութ: Յովաքանաննը վտանգա-
ռոր է, հա հա հա:

Եւ նա ձեացրեց թէ ծիծաղում է:

— Լոփիր: Եւ նա կրկին պատմեց այն ստորացման մասին,
որին ենթարկուեց մի անգամ Գաղատատի ճանապարհին, ուր զնա-
ցել էր անուշաբոյր խոտեր ժողովելու: — Ժողովրդի բազմութիւնը
խոնուել էր գետի ափին: Մօտիկ րլրակի վերայ խօսում էր մի
մարդ: Ռւդորի մորթին ծածկում էր նրա գօտին, և նրա զլուխը
նման էր առիւծի զլիսի: Տեսնելով ինձ, նա ոկսեց թափել ըոլոր
մարգարէների նզովքը: Նրա կոպերը վառվում էին, ձայնը նման
էր մանչոցի, նա կարծես որոտ էր արձակում, բարձրացնելով ձեռ-
քերը դէպի երկինք: Ես չէր կարողանում փախչել: Իմ կառքի առ
նիւները մինչև առանցքը խոռուել էին աւազի մէջ, և ես դանդաղ-
որէն հեռացայ ծածկուած վերարկուով, բոլորովին մեռած վիրա-
ւորանքից, որ թափուում էր ինչպէս փոթորկալից անձրե:

— Յովաքանաննը խանգարում էր նրան ապրել: Երբ նրան
բռնեցին և թոկերով կապեցին. զինւորներին հրամայուած էր
սրախողիստ անել, եթէ կմտածի ընդիմանալ. բայց նա ընդդիմու-
թեան ստուերն էլ ցոյց շտուեց: Նրա մօտ բանորի մէջ զցեցին
օձեր, բայց նոքա չորացան:

Հերովդիաղայի բոլոր փորձերն իզուր անցան և այդ նրան
կատաղեցնում էր: Եւ ինչո՞ւ համար նա ուզում էր պատերազմ
մղել իր հետ: Ի՞նչ էր նրան առիթ տալիս: Նրա ճառերը, կոչը
ժողովրդեան տարածւում էր ամեն կողմ, Հերովդիաղան լառմ էր
այն այմեն տեղ, զրանով յագեցած էր օղը: Նա չէր վախճանալ
լեզեաններից, բայց Յովաքանաննի խօսքերը սրի հարուածներից
ուժեղ էին. Հերովդիաղան կարկամում էր նրա առաջ, զգալով իր

անզօրութիւնը և բարկութիւնից գունատուած ձգւում էր տանիքի վերայ խօսք չգտնելով, որ արտայայտի այն, ինչ որ իրան խեղուում էր:

Հերովդիադան մտածում էր նոյնպէս, որ Տետրարխը հասարակական կարծիքի ճշման տակ կարող էր իրենից բաժանուել Այն ժամանակ ամեն ինչ կորած էր: Մանկութիւնից նա երազում էր մեծ թագաւորութեան մասին: Որպէսզի այդ իրականացնի, նա ձգեց իւր առաջին մարդուն և միացաւ Անտիպայի հետ, որը շարդարացրեց նրա սպասածը:

— Եաւ պաշտպանութիւն դտայ ես քո ընտանիքում:

— Նա պակաս չէ քան քոնք, առաց Տետրարխը:

Հերովդիադան զգաց թէ ինչպէս իւր մէջ եռում էր արքաների և քահանայապետների — իւր նախնիքների արիւնը:

— Թո պապը սրբում էր Ասկալոնի տաճարը: Թո ցեղից միւս ները հովիւներ, աւաղակներ, կարաւանների առաջնորդներ-խաժամուժ էին, որոնք հարկ էին վճարում Յուղայի ցեղին Դաւիթ թագաւորի ժամանակից: Իմ նախնիքները միշտ ծեծում էին ձերոնց: Մակարայեցիներից առաջինը դուրս վանդեց ձեզ Քերոնից, Դիրկանը հարկադրեց թլպատուել:

Եւ պատրիցունու դէպի պլիերէն ունեցած կատարեալ արահամարանքով, Յակովի դէպէ եղումուն ունեցած ատելութեամբ նա թափում էր իւր յանդիմանութիւնները դէպի վիրաւորանքը ցոյց տուած անսարքերութեան վերայ, դէպի փարիսեցիներն ունեցած մեզմութեան համար, որոնք մատնում էին իրեն, նոյնպէս և Անտիպայի վերայ նրա համար, որ վախենում էր ժողովրդից, որը իրեն՝ Հերովդիադային ատում էր: — Դու նման ես նրան, խստովանիր: Եւ գու ափսոսում ես արարացի աղջկան, որը կաքաւում է քարերի շուրջը՝ Վերադարձրու նրան քեզ մօտ: Կորիր նրա հետ նրա վրանը կիր նրա ածուխի վերայ թիւած հացը: Խմիր նզա ոչխարների թթու կաթը: Համբուրիր նրա կապաած այսերը և մոռացիր ինձ:

Բայց Տետրարխը նրան այլևս չէր լսում, նա նայում էր տներից մէկի տանիքին, ուր երևաց մի մատաղ աղջկէ. Նրա մօտ պառաւը բռնել էր եղէզնի հրկար կոթուլ ամպուվանին, որ նման էր կարթի ձողի: Գորդի մէջտեղում բացուած էր մեծ ճանապարհորդական զամբիւղը: Գօտիներ, ծածկոցներ, ոսկեայ և արծաթեայ զարդերը խառնի խուռան կախ կլսուած էին նրա եղերքներից: Երւ բնին երբեմն աղջիկը կռանում էր դէպի այդ իրերը և թափահարում էր նրանց, բարձրացնելով օդի մէջ: Նա հագնուած է հոռվամայեցի կնոջ պէս, երկար տունիկ և զմբուխտի վնջերով թիկնոց, երկնազոյն ժապաւէնը պահում էր նրա վարսերը, սոքա երկի շատ

ծանր էին, որովհետեւ նա երբեմն ձեւաքը տանում էր գեղի մազերը: Ամազովանու ստուերը շարժում էր նրա վերայ կիսով չափ ծածկելով նրան: Անտիպան թուուցիկ կերպով նկատեց նրա քընքուշ վիզը, աչքի անկիւնը, փոքրիկ բերանի եզրը: Բայց նա տեսնում էր թէ ինչպէս թեթև ձգուելով ձկում էր նրա իրանը, տեսնում էր նրան ազդրից մինչև ծոծրակը և բռնում էր նրա շարժումները, նրա կուրծքը բարձր ուռչում էր, աչքերը վառվում էին: Հերովդիաղան դիտում էր նրան:

Անտիպան հարցրեց: — Ո՞վ է նա:

Հերովդիաղան պատասխանեց, որ չգիտէ և յանկարծ հանգստացած հեռացաւ:

Տեսրարիխն կամարակապ սրանների տակ սպասում էին գալիլիացիք, նրա գիւանի կառավարիչը, աղագործարանի վերահսկողը, արօտատեղերի վերակացուն և բարելոնացի հրէան, նրա ախոռապետը: Բոլորը բացականչութիւններով ողջունեցին Անտիպային: Ապա նա գնաց ներքին սենեակները:

Յանկարծ նախասենեակի անկիւնից նրա առաջ կանգնեց Փանուէլը:

— Ա, դու դեռ այստեղ ես, դու ի՞արկէ, կամենում ես Յովաքանաննին տեսնել:

— Եւ քեզ! Ես պէտք է քեզ հազորդեմ մի կարևոր բան:

Եւ Անտիպայից մի քայլ էլ չհեռանալով նրա հիմ մտաւ մութ հանգստարանը:

Լոյսի երկար շերտերը ընկնում էին նրա վերայ ցանկապատի միջից: Պատերը ներկուած էին մուգ նոնենու գոյնով: Խորքում բարձրացած էր սկ փայտից, եղան կաշուի լարերից հիւսուած օթեակը: Ռոկի վահանը փայլում էր նրա վերեւում, ինչպէս արեգակ:

Անտիպան անցնելով ամբողջ սենեակը թիկնեց օթեակի վերայ:

Փանուէլը շարունակում էր կանգնած մնալ և բարձրացնելով ձեռքը ոգեսրութեամբ արտասանեց:

— Ամենաբարձրեալը երբեմն ուղարկում է իր որդիներից մէկին: Նա ուղարկեց Յովաքանաննին եթէ դու նեղես նրան, ապա նա քեզ կպատժի:

— Յովաքանաննը ինքն է հալածում ինձ, բացականչեց Անտիպան: Նա պահանջեց անկարելին և այն օրից չի գաղարում ինձ հետամտելուց: Ակզառում ես խիստ չէին Բայց նա Մարիներուսից մարդիկ ուղարկեց, որոնք իմ կալուածներում յուղուն են սերմանում: Նա յարձակում է, ես պաշտպանում եմ: Վայ նրան:

Նա իւր զայրոյթի մէջ անսանձ է, պատասխանեց Փանուէլը: Բայց միևնոյն է, դու պէտք է աղատես նրան:

— Արատաղած զազաններին ազատ չեն արձակում, ասաց
Տետրարխը:

— Մի վախիլ, նա կերթայ Արարների մօտ, Գալլէրի մօտ,
սկիւթացիների մօտ: Նրա գործին վիճակուած է ամբողջ աշխարհն
անցնել:

Անտիպան կարծես վերացել է ինչ որ տեսիլքի յառելով:

— Նա ամենակարող է... Չնայելով այն բոլորին, ես նրան
սիրում եմ:

— Այն ժամանակ ազատիր նրան:

Տետրարխը գլուխն օրօրեց. Նա վախենում էր Հերովդիա-
դայից, Մաննայից և ինչ որ աներեւոյթ բանից:

Փանուէլը գործ դրեց ամեն ջանք, որ համոզի Անտիպային,
իւր խօսքերին իրրե ապացոյց բերելով, որ յեսսենացիք թագա-
տրին հնազանդ են: Խոր յարդանքը պատել էր այս խեղճ, անվի-
ներ մարդկանց, որոնք հագնում էին վուշից գործուած հագուստ
և կարդում էին ապազան ըստ աստղերի:

Անտիպան մտարերեց Փանուէլի խօսքերը:

— Դու ինձ կամենում էիր հաղորդել ինչ որ կարևոր բան-
ասար:

Ցանկարծ երևաց խափշեկը: Նրա մարմինը փոշու մէջ կո-
րած էր: Նա խոպում է և միայն կարողացաւ ասել:

— Բիթելիոսը:

— Ի՞նչպէս, նա դալիս է այստեղի:

— Ես ինքս նրան տեսայ: Զի անցնիլ երեք ժամ, նա այստեղ
կլինի:

Անցքերում վարագոյրները շարժւում էին, կարծես քամուց
հողմահար: Արքունիքը լցուեց աղաղակներով, վազող մարդկանց
գոփիւնը խառնւում էր տեղափոխուող զարդարանքների զզրդոցին,
մօտ բերուող արծաթեայ ամանների զբնգոցին. աշտարակներում
հնչեցին փողերը, որոնք գործի էին կանչում թափառող ստրուկ-
ներին:

Թարգ. Մատքոս եպիսկոպոս

(Շարունակելի)

